# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

12 մարտի 2018 թվական

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7(յոթ) անդամներ:

Բացակա էին Գեորգի Աղաջանյանը, Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը, Հայկ Վարդևանյանը:

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը, Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Հայրապետյանը, Բյուրեղավան համայնքի ղեկավարի խորհրդական Սարգիս Ղազարյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Վոլոդյա Հայրապետյան, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Վարուժան Մարտիրոսյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Աննա Սահրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը, Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Եղյանը, Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միքայել Միքայելյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հայոր Բալայանը:**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավոյանը:**

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալայանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*//Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ /*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N24–Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

3)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 14-ի N13–Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

4)Պարտավորություն ստանձնելու մասին,

5)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման կարգը, աղբահանության պայմանագրերի ձևերը և համայնքի սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին,

6)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքներն իրականացնելու մասին,

7)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման (մուտքագրման) կարգը սահմանելու մասին,

8)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և իրականացման կարգը սահմանելու մասին,

9)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու և համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին,

10)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին,

11)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին,

12)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,

13)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Հուշաղբյուրի կառուցում» և «Պուրակի կառուցապատում» ծրագրերը հաստատելու մասին,

14)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով տեղծվող մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմերի մասին,

15)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին,

16)Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,

17) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի N 99-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

18)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2018թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը հաստատելու մասին,

19)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2018թվականի բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տեսակները և սակագները հաստատելու մասին,

20)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին,

21)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

22)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 35 բնակարանն անհատույց Արթուր Մուրադյանին օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին,

23)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի N100 բնակարանն անհատույց Սոնյա Ավետիսյանին օտարելու մասին,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 08-Ա/

Օրակարգն հաստատելուց հետո հաստատված հերթականությամբ ներկայացվեցին որոշումների նախագծերը:

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Բյուրեղավան համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը եկամուտների մասով՝ 266247,9 հազար դրամ, ծախսերի մասով՝ 264703,0 հազար դրամ, տարեվերջի ազատ մնացորդ՝ 77345,8 հազար դրամ՝ համաձայն N1, N2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ն/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ.ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի

Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին» N24-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշմամբ հաստատված հավելվածի 2,3,6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1,2,3 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 10-Ն/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Բյուրեղավան համայնքի աղբահանության աշխատանքներն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N13-Ա որոշմամբ հաստատված հավելված N1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 11-Ա/

*Լսեցին*

***ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/*

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Բյուրեղավան համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև, 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ ավագանին որոշում է.

1.Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 12-Ա/

*Լսեցին*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 13-րդ հոդվածի 2-րդ մասերի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքների իրականացման կարգը՝ համաձայն հավելված N1– ի:

2.Հաստատել Բյուրեղավան համայնքի աղբահանության աշխատանքների իրականացման նվազագույն ժամանակացույցը՝ համաձայն հավելված N2–ի:

3.Հաստատել Բյուրեղավան համայնքում աղբամանների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը՝ համաձայն հավելված N3-ի:

4.Հաստատել Բյուրեղավան համայնքի կենցաղային աղբի հեռացման աշխատանքների պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N4–ի:

5.Հաստատել Բյուրեղավան համայնքի ոչ կենցաղային աղբի հեռացման աշխատանքների պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N5–ի:

6. Հաստատել Բյուրեղավան համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված N6-ի:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 13-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության աշխատանքները ապրիլի 1-ից իրականացնել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

2.Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքները կատարել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ Բյուրեղավան համայնքի ավագանու կողմից սահմանված համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին որոշման համաձայն:

3.Աղբահանության վճարի գանձումը (մուտքագրումը) վերապահել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 14-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ (ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ) ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման (մուտքագրման) կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 15-Ն/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ , ԾԱՎԱԼԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 16-Ն/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՆՆԱ ՍԱՀՐԱՏՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի ու 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:

2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ֆինանսական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները՝ համաձայն հավելված N2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 17-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 18-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 82-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 – 2022 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 19-Ն/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018թվականի հունվարի 12-ի N01/16.2/80-18 հանձնարարականը՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 20-Ն/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԵՎ «ՊՈՒՐԱԿԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, պայմանավորված Բյուրեղավան համայնքում բնակիչների հանգիստը պատշաճ կազմակերպելու միջավայր ստեղծելու անհրաժեշտությամբ՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Հուշաղբյուրի կառուցում» ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի «Պուրակի կառուցապատման» ծրագիրը՝ համաձայն N2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 21-Ա/

***Լսեցին***

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ՋԱՐՈՒՀԻ ԱՊՐԵՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N02-Ն որոշմամբ հաստատված ավագանու կանոնակարգի 22-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ավագանին որոշում է.

1.Ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծել մշտական գործող հետևյալ հանձնաժողովները և հաստատել հանձնաժողովների անդամների կազմը՝

1)Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով՝
ա.Ապրեսյան Վահրամ,
բ.Հարությունյան Սլավիկ,
գ.Աղաջանյան Գեորգի,

2)Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի, մշտական հանձնաժողով՝
ա.Վարդևանյան Հայկ,
բ.Ասոյան Ավետիք,
գ.Շառոյան Արգամ,

3)Ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝
ա.Օհանյան Արման,
բ. Ավագյան Արտյոմ,
գ. Խանզադյան Արման,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 22-Ա/

ումին

ՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

...մաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ...-րդ հոդվածի 8-րդ մասի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու ... թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի ...մայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու և ...Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի ...աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու ...մին № 03–Ա որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետը՝ ավագանին որոշում է.

...Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, ...միջոցների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի ...կանոնադրությունը՝ համաձայն հավելված N1-ի:

...Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի ...կանոնադրությունը՝ համաձայն հավելված N2-ի:

...Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

...Որոշումն ընդունված է. /որոշում N 23-Ա/

...ումին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ...ԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ...ՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ՀԱՅԿ ԵՂՅԱՆ/

...Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ...-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ...մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի՝ ավագանին ...որոշում է.

...Հաստատել Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» ...համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ ...համաձայն հավելվածի:

...Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

...Որոշումն ընդունված է. /որոշում N 24-Ա/

*...ցին*

*...ՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ...ՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ...ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ի N 99-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/*Զեկ.ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*/

...ամաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի ...րդ մասի 3-րդ կետի և 5-րդ մասի՝ ավագանին որոշում է.

...յուրեղավան համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 21-ի ««Բյուրեղավանի քաղաքային ...լիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը Անդրանիկ Պետրոսյանի անվամբ ...վանակոչելու մասին» N 99-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված ...վելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

...յս որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

...րոշումն ընդունված է. /որոշում N 25-Ա/

*...ցին*

*...ՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԴՐԱՆԻԿ ...ՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ...ԿԵՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ...ՍԻՆ*

/*Զեկ.ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*/

...ամաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ...րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ...աստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի 1-ին մասի ...» կետի և հիմք ընդունելով «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային ...լիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2018թվականի փետրվարի 09-ի ... և փետրվարի 21-ի N 81 գրությունները՝ ավագանին որոշում է.

...աստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ...նդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ ...ժնետիրական ընկերության 2018թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը՝ ...ամաձայն հավելվածի:

...յս որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

...րոշումն ընդունված է. /որոշում N 26-Ա/

*Լսեցին*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և հիմք ընդունելով «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2018թվականի փետրվարի 09-ի N63 և փետրվարի 21-ի N81 գրությունները՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տեսակները և սակագները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 27-Ն/

*Լսեցին*

***ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ « ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և Բյուրեղավան համայնքի խոշորացման արդյունքում համայնքի Բյուրեղավան, Ջրաբեր, Նուռնուս բնակավայրերում բարեկարգման աշխատանքներ կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով, ավագանին որոշում է.

1.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ 1 հատ տրակտոր 82 Մինսկ 808184190, թողարկման տարին՝ 2014թվական, հաշվեկշռային արժեքը՝ 7 000 000 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 28-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգին հաշվի առնելով հանձնման-ընդունման ակտով ներկայացված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերի գույքագրման փաստաթղթերը՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝

1)Համայնքի վարչական տարածքի հողերի սեփականատերերի մասին տեղեկանքը (25.12.2017թ. դրությամբ)՝ համաձայն հավելված N1-ի,

2)Պաշարների (ներառյալ փոքրարժեք կամ արագամաշ առարկաների) գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N2-ի,

3)Հիմնական միջոցների գույքագրման ցուցակները՝ համաձայն հավելված N3-ի,

4)Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի և ստացման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N4-ի,

5)Մատակարարումների գծով կրեդիտորական պարտքերի և վճարման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N5-ի,

6)Բյուջեի հետ հաշվարկների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N6-ի,

7)Կանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N7-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 29-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 49 ՇԵՆՔԻ 35 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովի արձանագրությունը և Արթուր Մուրադյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N35 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան 32սենյակ), 5տարի ժամկետով անվարձահատույց օգտագործման տրամադրել Բյուրեղավան համայնքի բնակիչ Արթուր Շուռայի Մուրադյանին (ծնված՝ 1969 թվականի հուլիսի 20-ին)՝ որպես բնակտարածք օգտագործելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 30-Ա/

<u>Լսեցին</u>

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ N100 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍՈՆՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ.ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596 հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սոնյա Ավետիսյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 16,19 ք.մ ընդհանուր մակերեսով N 100 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 110 սենյակ) անհատույց օտարել Սոնյա Մարտունի Ավետիսյանի երկու անձից բաղկացած ընտանիքին.

ընդհանուր համատեղ սեփականատերեր համարել՝
Սոնյա Մարտունի Ավետիսյանին՝ ծնված 1966 թվականի հուլիսի 08-ին,
Վիկտոր Էդվարդի Ղլիջյանին՝ ծնված 1962թվականի նոյեմբերի 12-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սոնյա Մարտունի Ավետիսյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

որոշում N 31-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

**Ավագանու անդամներ՝**

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ ____________

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ____________

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ ____________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ____________

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ____________

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ____________Լ. ԱՎՈՒՇՅԱՆ